



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Toronto... Jan. 28th, 19. 83.

ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՆՉՊԷՅ ՈՐ Է

Յարգելի Անդամ եւ Անդամուհի

Հայաստանեայց Առաք եւ լական Եկեղեցին քրիստոնէական ամենահին եկեղեցիներէն մին է: Իւրայառուկ է ու ազգային բնոյթ ու ունի: Հայաստանեայց Եկեղեցին ոչ միայն քրիստոնէութիւնը քարոզրդ հաստատութիւն մըն է, այլ նաև պետականութենէ զուրկ հայուն ամբողջականութիւնը կը ներկայացնէ:

Հայաստանեայց Եկեղեցին սփիւրքահայութեան համայնքին գործերը կը դասաւորէ, հայապահանման դատին պատկան է, անհատին, նայր Աթոռ Սուրբ էջմիածնի հետ ունեցած կապերը կը զօրացնէ.....:

Հայաստանեայց Եկեղեցին սփիւրքահայութիւնն է: Իւրաքանչիւր ծՈՒԽ, այս պետութեան մէկ քաղաքն է:

Աստուծոյ աղօթելու համար ծՈՒԽ երու ոլէաք շկայ:

ծՈՒԽ եր կը կազմուին կամ կը հաստատուին այդ շրջանի ծրղութիւնը կառավարելու եւ անոնց հոգատարութիւնը կատարելու նպատակաւ: Իւրաքանչիւր ծՈՒԽ, ինչպէս էւրոպանչիւր քաղաք, իրարմէ կը տարբերի: Իւրայատուկ հոգեր, կարիքներ կ ունենայ: Այս պատճառաւ ալ, այս թուրին ծանօթ, իր մէջէն բիած վարչութեան մը կրօկարօտի:

Այսօր, Սուրբ Խաչ էն զլայուածը այս է:

Պատմութիւնը կը կպայէ թէ շիռդ դասակարգը իր կառավարած ժողովուրդին բնական իրաւունքները անորոշական մը շտ զլայած է: Ուստի, ժողովուրդը իր արդար իրաւունքներու հիմք միջոցներով ծեռք ծգած է:

հիմնութիւնը համուսուի, Զի Տրոհիր:

Մեր ծՈՒԽ ի կարգ մը անձերուն կարծիքին համածայն, Գերշ. Տէր Թորգում Արք. Մանուկեսնի մօտենալու եւ Սրբազնին միջոցաւ Ս. Խաչին Վերանանաշում ստանալու կարելութիւնը կայ:

Այս կարծիքը, դժբախտաբար, ժողուէ հաստատ տուեալ: մը արդիւնքը չէ, պարզապէս ենթադրութիւն մըն է: Ենթադրութեան մը, նա մանաւանդ այսպիսի ենթադրութեան մը, հաւաքը ընծայել եւ նամակարծիք ըւլ լայ բաւական դժուար է:

Հետեւեալ իրողութիւնները կուզան ցոյց տալ թէ վավաքուած նպատակին հասնի լ վերոյիշեալ ենթադրութեամբ կարելի չէ:

- Ինքունքը Թորգում Սրբազնի բարեկամ, կամ Թորգում Սրբազնը իր են բարեկամ նկատող, ծխական Խորհուրդի նախկին անդամ մը, ասկէ մօտաւորապէս վեց ամիս առաջ, Թորգում Սրբազնի քանից հեռածայնած է եւ ամէն անգամ որ Սուրբ Խաչի մասին խօսած է, Սրբազնը հեռածայնը գոցած է:

- Թորգում Սրբազնի կողմէ նորթ նորքի ծխական Խորհուրդին նշանակուած, սակայ պարտականութիւնը մերժած Տիկնոջ մը միջոցաւ, Թորգում Սրբազնի հետ տեսնուելու եւ Սուրբ Խաչ ծուիի նեմական վերանանաշում ստանալու միջոցները փնտուած ու արդիւնքը ոչինչ եղած է:

- Այս թուրիէն վերջ, Սեպտեմբերին, անդամական ժողովի որոշումով, Թորգում Սրբազնի անգամ մըն ալ մօտենալու նպատակաւ, հինգ անձերէ քաղկացեալ յանձնախումբ մը կազմուած է: Թորգում Սրբազն, այս անձերուն ոչ հեռածայններուն եւ ոչ ալ զրաւոր դժուաններուն պատասխան տուած է:

Թորգում Սրբազն, այս անձերէն ոմանք, նորթ նորքի հիմնարկութեան

օրերուն, իրեն համար վստահելի անձեր նկատելով, անոնց հետ հեռածայնային խօսակցութիւններ ունեցած է:

- Սուրբ Խաչ ծուխի՝ Թորոնթոյի երկրորդ ծուխի հարցը, վերջնականապէս մէջտեղէն վերցնելու համար, Թորգոն Սրբազն ամիջապէս անանուն ծուխ մը՝ Նորթ Եղրքի ծուխը հիմնած է:

Վերոյիշեալ իրողութիւնները ցոյց կուտան թէ՝ Առաջնորդարանը Սուրբ Խաչ ծուխի հետ հետաքրքրութելու նպատակ չունի:

Հոս կարելի է հարց տալ թէ՝ Առաջնորդարանը Նուրբ Խաչ ծուխի հետ ինչու հետաքրքրութիւն չուգէր:

- Առաջնորդարանը, Սուրբ Խաչի նման, մենատիրութեան համամիտ չի գտնուող ։ Նիւ Եղրքի շրջանի մէկ կամ երկու կիսակազմակերպեալ ծուխերուն տարիներէ ի վեր նաև չում չէ շնորհած:

- Սուրբ Խաչ ծուխը կուտակցութիւն մը չունենալով հանդերձ, իր մէջ ցարդ կուտակցական անդամներ չունի:

- Առաջնորդարանը, ծուխին վերաճանաչում շնորհելով ընդունած պիտի ըլլայ որ ծուխը լուծեն որոշումը սխալ էր: Առաջնորդարանի ներկայ վարչութենէն այս մեծութիւնը սպասել կարելի չէ:

- Սուրբ Խաչ ծուխի ամենօրեայ վարժարան մը բացած եւ հինգ տարիէ ի վեր զայն կանոնաւոր կերպով պահած ըլլալու իրողութիւնը ոմանց համար ցանկալի չէ:

- Առաջնորդութիւնը, Արեհելման թէսի Մէջ, ԱՄՆԱԱԶԱԿԵՐՊԵԱԼ, ԱՄԵՍԱՄԵԾ, ՑԱՐԴ ՅԱԱՍԱԿԻՆՍՈՒԻԹԻՒԽՆԸ ՊԱՀԵԼ ԱԱՐՈՂԱՑԱԾ ՃՈՒԽ ՄԸՆ է:

- Առաջնորդարանը գիտէ որ՝ անորոշ վիճակի մը ստեղծումով կամ ծգծգողական թաքթիքով զաղաբարը ու տեսակէտի տարակացնութիւններ կը նայ ի այտ գալ, ինչ որ ամենագօրաւոր հաստատութիւնները անգամ կը նայ կործանել:

- Վերոյիշեալ բացատրութիւններէն շատ դիւրաւ կարելի է եզրակացնել որ՝ Առաջնորդարանը Սուրբ Խաչի ինչու հետաքրքրում չի հաստատէր:

Նիւ Եղրքի ներկայ վարչականները, իրենց իշխանութեան ընթացքին, Սուրբ Խաչի վերաճանաչուած տեսնել պիտի չուգեն:

Ամեն անգամ որ արտագին ազդեցութիւններ ներս թափանցել կը ջանան, հարցերու ծագման առիջ կը լսան:

Եզրափակելով, բոլորս պէտք է ըլլանք միահամուռ մէկ անձ, մէկ միաք, որպէսզիկար ենանք գտնել լաւագոյն լուծումը ու արդարութիւնը ի յայտ բերել:

Ծխական Խորհուրդ

Յ.Գ. Թորգոն Սրբազնի մօտենալու հարցը վերարծարծուած է Ս. ծննդեան պատարագէն եւ ծական Խորհուրդի երեք անդամին 10 Յունուարին, ծխական Խորհուրդէն հրաժարելէն վերջ:

Հոս պէտք է յիշել որ՝ 5 Յունուար 1983, Չորեք շաբթի գիշեր, ծխական Խորհուրդը, այդ օրուայ իր ամբողջական կազմով՝ եօթը անձեր, ժողով գումարած է:

Մէկ դէմ - Սուրաւա Պարագաշ-, մէկ ծեռնպահ - Սուրէն Էվրուան - եւ չորս ի նպաստ քուէով որոշած է Խնդոյ Խան Եպիսկոպուսը յաջորդ օր պատարագ մատուցանելու հրաւրել: Ատենապետը քուէ չէ գործած:

Հակառակ այս իրողութեան, Հինգշաբթի առաւօտ իսկ, տարածայնութիւններ ելած է որ՝ ծխական Խորհուրդը այսպիսի պատարագէ մը տեղեկութիւն չունէր:

Ցաւել եալ լուսաբանութեան համար, հոս կուգենք մշղել որ՝ Սուրբ ծննդեան օր պատարագ բանական համար, ծխական Խորհուրդը իր Ռեկտեմբեր թ, 1982ի ժողովին որոշ շում առած էր ու այդ ուղղութեամբ երկու կղերականներու մօտեցած, սակայն արդիւնք մը չէր կրցած ձեռք ծգել:

Այս իրողութիւնները Զեզի կը փոխանցենք, որպէսզի անհասկացող լութիւններու առաջքը առնելի:

Յառաջիկային, ուրիշ հաղորդագրութեամբ, աւելի մանրամասն տեղեկութիւններ պիտի տրուին: